ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Վերին Անտառայինի՝ Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Սարալանջի փողոց ընկած հատվածն անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, նշանավոր հայ երգիչ Հովհաննես Բադալյանի անվամբ՝ «Հովհաննես Բադալյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հովիաննես Համբարձումի Բադալյանը ծնվել է 1924թ. դեկտեմբերի 15-ին, Իրանի Համադան քաղաքի մոտ գտնվող Շավարին գյուղում:

1946-1949թթ. սովորել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1986թ. ավարտել է Երևանի կոնսերվատորիան:

1949-1954թթ. եղել է Հայաստանի երգի-պարի պետական մեներգիչ:

1954-2001թթ.՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի ժողգործիքների անսամբլների մեներգիչ:

1961թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչմանը:2001թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

1982-2001թթ. դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում:

Հովիաննես Բադալյանի երգացանկում ներառված են հայ դասական և ժամանակակից հեղինակների (Խաչատուր Ավետիսյանի «Որտեղ գտնեմ քեզ», «Երբ կանչում ես ինձ», Արամ Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի», Նիկոլ Գալանդերյանի «Դու նորից եկել ես», «Ափսոսանք»), ժողովրդական («Հորովել», «Խանիման-ջանիման», «Սարերի հովին մեռնեմ»), աշուղական (Ջիվանու «Ազգ իմ») երգեր:

Հովիաննես Բադալյանը հյուրախաղերով հանդես է եկել արտասահմանում:

Հովիաննես Բադալյանը մահացել է 2001թ. օգոստոսի 19-ին, Երևանում:

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, նշանավոր հայ երգիչ Հովիաննես Բադալյանի անվամբ Երևան քաղաքի Վերին Անտառայինի՝ Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Սարալանջի փողոց ընկած հատվածն անվանակոչելու միջնորդություն է ներկայացվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ տնօրեն Գարեգին Խումարյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ